2. Գուսան - ստեղծագործող և կատարող արվեստագետ հին և միջնադարյան Հայաստանում: Դեռ 5-րդ դարում, «Պատմութիւն Հայոց» աշխատությունում Մովսես Խորենացին հիշատակել է **Գողթան երգիչների** մասին: Գողթան երգիչները **գուսան-վիպասաններ** էին, ովքեր ստեղծել և կատարել են Շամիրամի, Աժդահակի, Արտաշեսի և Սաթենիկի և այլոց մասին երգեր: Վաղ միջնադարյան հայերեն թարգմանություններում և բնագրերում «գուսան» բառն օգտագործվում էր որպես հին հունական *միմոս* (μίμος) բառի համարժեք: Ներառում է ընդհանրական մի իմաստ, որը համապատասխանում է նոր ժամանակներում ընդունված *արտիստ* հասկացությանը: Գուսան կոչվել են երգիչները, նվագածուները, պարողները, պատմաառասպելական զրույցներ և վիպական երգեր ավանդողները, ժողովրդական հրապարակային թատրոնի դերասանները՝ ձեռնածուները, աճպարարները, լարախաղացները և խեղկատակները: Հայաստանում կին գուսանները կոչվել են **վարձակ**: Ուշ միջնադարի ընթացքում գուսանների տարբեր խմբեր պարզապես վերածվեցին աշուղների կամ սազանդարների:

Ի սկզբանե հայ աշուղները կատարում էին իրենց ստեղծագործությունները հայերենի տարբեր բարբառներով, սակայն ավելի ուշ անցան առավել մատչելի և հասկանալի գրական լեզվին:

Աշուղներն իրենց կյանքի ընթացքում այցելում են բազմաթիվ բնակավայրեր, ներկայացնելով իրենց արվեստը: Ինչպես նշում է աշուղ **Ջիվանին.**

Անթև թռչնակ է աշուղը –
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ.
Դարձող ճախրիկ է աշուղը,
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

3. ՍԱԶ - լարային կսմիթավոր նվագարան է: Տարածված է Կովկասում, Մերձավոր և Միջին Արևելքում: Գոյություն ունեն սազի մեծ ու փոքր տեսակներ, որոնք ունեն տարբեր թվով մետաղե լարեր՝ 4-10:

Սազը սիրված նվագարան է հատկապես գուսանների և աշուղների շրջանում, այսինքն՝ հնագույն ծագում ունի:

Աշուղական սազը սեփական երգին նվագակցող նվագարան է:

Տանձաձև իրանը պատրաստում են թթենու կամ տանձենու փայտից: Նվագում են ոսկրե կամ եղջյուրե կնտնտոցով՝ բոլոր լարերին միաժամանակ հարվածելով: Տեմբրը զնգուն է, բայց փափուկ:

Հայաստանում սազն առավելապես աշուղական նվագարան է:

Սազի ձայնը մաքուր է ու զրնգուն, սակայն մեղմ ու թույլ, ուստիև ժամանակակից անսամբլներում այդ նվագարանը փոխարինվել է առավել հնչեղ քանոնով:

Սազի մասին հիշատակվում է «Սասնա ծռեր» էպոսում: Ներկայումս այդ նվագարանն ընդգրկված է «Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլում:

4. Վարձակ - կին գուսաններն էին, ովքեր տիրապետում էին այն ամենին, ինչին պետք է տիրապետեր գուսանը, այսինքն՝ երգել, պարել, նվագել, բեմադրություններում դերեր խաղալ ևն. գուսանը մեր ժամանակների «արտիստն» է:

Աշուղները մշակում են իրենց բնորոշ երաժշտական և տաղաչափական ձևեր:

Աշուղները յուրացրել են տվյալ շրջապատին ու ժամանակին հատուկ աշուղական հիմնական եղանակները և հարստացրել դրանք՝ հորինելով նոր մեղեդիներ: Աշուղները մասնակցում էին աշուղական հրապարակային մրցություններին, երգով ու նվագակցությամբ ելույթներ ունենում միայնակ կամ ընկերներով:

Գոյություն են ունեցել հայկական աշուղական երգարվեստի տարբեր դպրոցներ, որոնք ունեցել են իրենց հատուկ ավանդույթները: Բոլոր այս դպրոցները տարբերվում էին միմյանցից հայերենի բարբառներով, կատարողականությամբ, պոետիկ չափանիշներով և երաժշտական ոճերով:

5. ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ (1661, Շոռոթ – 1722, Շոռոթ), հայ միջնադարյան բանաստեղծ, աշուղ, նկարիչ, ծաղկող: Հովնաթանյան ընտանիքի հիմնադիրը:

Նախնական կրթությունն ստացել է հոր՝ Հովհաննես վարժապետի մոտ, այնուհետև սովորել է Ագուլիսի Ս. Թովմա վանքի դպրոցում, որն ավարտելուց հետո, աշխատել է որպես ուսուցիչ նույն դպրոցում: Ն. Հովնաթանի կյանքի մասին միակ գրավոր աղբյուրը նրա ավագ որդու՝ նկարիչ և բանաստեղծ Նաղաշ Հակոբի ողբն է («Ողբամ արտասուօք, կոծով տխրութեան»)՝ գրված հոր մահվան առթիվ: Հակոբի ողբից ենք իմանում Ն. Հովնաթանի ծննդյան և մահվան տարեթվերը, ինչպես նաև կենսագրական մի քանի փաստեր (օրինակ՝ հասարակ դպրից դարձել է «շնորհալի վարպետն իմաստուն», եղել է «քարտուղար տառից հնոց և նորոց»):

Որոշ ժամանակ ապրել և ստեղծագործել է Թիֆլիսում: Վրացական աղբյուրների վկայությամբ՝ նա եղել է Վրաստանի Վախթանգ VI թագավորի պալատական երգիչն ու նկարիչը:

6. ԲԱՂԴԱՍԱՐ ԴՊԻՐ, Պաղտասար Դպիր

Գրիգորյան, Կեսարյան, Կոստանդնուպոլսեցի (հունիսի 7, 1683, Ստամ-բուլ, - հունվարի 30, 1768, Ստամբուլ), հայ բանաստեղծ, երաժիշտ, գիտնական, հրատարակիչ, ազգային և կրթական լուսավորական շարժման

գործիչ, եղել է գրականության նորոգության ժամանակաշրջանի առաջավոր գործիչներից:

Շատ քիչ տվյալներ են պահպանվել Պաղտասար Դպիրի կենսագրության մասին: Որոշ չափով տեղեկություններ է հաղորդել գրականագետ, մատենագետ Գարեգին Լևոնյանը: Ըստ Լևոնյանի, Պաղտասար Դպիրի ծնողները՝ Գրիգորն ու Թուրվանդը, Կեսարիայից գաղթել են Կոստանդնուպոլիս, որտեղ էլ ծնվել է Պաղտասար Դպիրը: Նախնական կրթությունը ստացել է Կոստանդնուպոլսի դպրոցներում: 1741 թվականին Հակոբ Բ Նալյանը տեսուչ է նշանակել Գում Գափուի թաղամասի դպրոցներից մեկում, որտեղ դասավանդել է քերականություն, մայրենի լեզու, երաժշտություն և այլ առարկաներ: 1736-1760 թվականներին կազմել և հրատարակել է հայերեն ուսուցման համար դասագրքերի շարք՝ գրաբար և աշխարհաբար լեզուներով, որոնցով շուրջ մեկ դար դասավանդել են հայկական դպրոցներում: Դպրոցում կատարած իր գործունեության ընթացքում դպրոցն առաջխաղացում է ունեցել: Հետագայում իր աշակերտներից շատերը դարձել են նշանավոր դեմքեր՝ Սիմեոն Ա Երևանցին, Պետրոս Ղափանցին:

12-րդ դարից սկսած գրաբարն աստիճանաբար դուրս է եկել գործածությունից՝ զիջելով իր տեղը միջին հայերենին: Պաղտասար Դպիրը, Սիմեոն Երևանցին, Գրիգոր Օշականցին աշխատել են վերականգնել և գործածել գրաբարը՝ որպես գրական լեզու: